

# ՊԱՏՎԱՍՏՎԵԼԸ երբեք այսքան հեշտ չէր եղել:

COVID-19 Պատվաստանյութի ժամադրությունները անվճար են և հասանելի են 16 և ավելի տարեկան անձանց, ովքեր ապրում կամ աշխատում են Լոս Անջելեսի Շրջանում: Առողջապահական ապահովագրություն չի պահանջվում, իսկ ձեր ներգաղթային կարգավիճակի մասին հարցեր չեն լինի:

**Ինչպես Պատվաստվել Լոս Անջելեսի Շրջանում.**

1. Պատվաստվելու համար այցելեք Շրջանի կողմից ղեկավարվող տեղամաս աշխատանքային ժամերի ընթացքում: Գրանցման տեղերը հասանելի են միայն քանի դեռ պաշարներ կան, ԿԱՄ
2. Ձեզ կամ որևէ մեկի համար ժամադրություն ամրագրեք [MyTurn.ca.gov](MyTurn.ca.gov): Կհաստատվեն ձեր առաջին և երկրորդ դեղաչափի ժամադրությունները:



| **ԱՆՎՃԱՐ** | **Balboa Sports Complex** | **Cal State Northridge** |
|---|---|---|
|  | 17015 Burbank Blvd<br>Encino, CA 91316<br>Երեքշաբթիից Շաբաթ առավոտյան 8:30-ից ժամը 3:00-ը | 18343 Plummer Street<br>Northridge, CA 91325<br>Երկուշաբթիից Կիրակի առավոտյան 9:00-ից ժամը 4:00-ը |
| **Pomona Fairplex** | **Eugene A. Obregon Park** | **The Forum** |
| 2370 East Arrow HWY (Gate 15)<br>La Verne, CA 91750<br>Երկուշաբթիից Կիրակի առավոտյան 9:00-ից ժամը 4:00-ը | 4021 E. 1st Street<br>Los Angeles, CA 90063<br>Երեքշաբթիից Շաբաթ առավոտյան 8:30-ից ժամը 3:00-ը | 3900 Manchester Blvd<br>Inglewood, CA 90305<br>Երկուշաբթիից Կիրակի առավոտյան 9:00-ից ժամը 4:00-ը |
| **LA County Office of Education** | **Palmdale Oasis Park Recreation Center** | **College of the Canyons** |
| 12830 Columbia Way<br>Downey, CA 90242<br>Երկուշաբթիից Կիրակի առավոտյան 9:00-ից ժամը 4:00-ը | 3850-A East Avenue S<br>Palmdale, CA 93550<br>Երկուշաբթիից Կիրակի առավոտյան 11:00-ից ժամը 7:00-ը | 25000 Valencia Blvd<br>Santa Clarita, CA 91355<br>Երկուշաբթիից Կիրակի առավոտյան 11:00-ից ժամը 7:00-ը |

**Պատվաստվելու համար ձեզնից կպահանջվի ցույց տալ՝**

1. Նկարով ID, **և**
2. Ապացույց, որ ապրում կամ աշխատում եք Լոս Անջելեսի Շրջանում, **և**
3. Ապացույց, որ դուք 16 կամ ավելի տարեկան եք:

*Մեկ փաստաթուղթը կարող է բավարարել բոլոր պահանջները (օր.՝ վարորդական իրավունք)*

Պարտադիր չէ, որ կառավարության կողմից տրված ID ցույց տաք, և պատվաստվելու համար դուք պարտավոր չեք Միացյալ Նահանգների քաղաքացի լինել:

Կարող եք տեսնել պահանջվող փաստաթղթերը [այստեղ](այստեղ):

**Եթե 16 կամ 17 տարեկան եք.**

- Փնտրեք տեղամաս, որն առաջարկում է Pfizer պատվաստանյութը, քանի որ այն միակ պատվաստանյութն է, որը թույլատրվում է 16 և 17 տարեկաններին: Եթե գնաք տեղամաս, որը Pfizer չի առաջարկում, ձեզ հետ կուղարկեն:
- Եկեք ձեր ծնողի կամ խնամակալի հետ, երբ գալիս եք ձեր Pfizer պատվաստանյութի ժամադրությանը: Պատվաստման թույլտվություն տալու համար երեխաներին պետք է ուղեկցի ծնողը կամ խնամակալը:

* **Նշում.** 16 տարեկանից ցածր անձինք չեն կարող պատվաստվել, քանի որ ներկայումս չկա այնպիսի պատվաստանյութ, որը թույլատրելի է տարիքային այս խմբի համար:



[VaccinateLACounty.com](VaccinateLACounty.com)

04/27/21 (Armenian)

County of Los Angeles Public Health